ARMENIA, Journal en langue Arménienne, fondé à MARSEILLE en 1885.

ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամբողջ 26րդ շրջանի բաժնորդագինն է 20 ֆրանք. Թիւրքիոյ և Պարսկաստանի համար 10 ֆրանք, ԿԱՆԽԻԿ։ Կարելի է նաև բաժանորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամէն մէկ ամսականը 2 ֆր. (Թիւրքիոյ և Պարսկաստանի համար 1 ֆր.) հաշուելով։ Նամակ և դրամ պէտք է ղրկել այս հասցէով. M. PORTOUKALIAN
Directeur du journal *Arménia*
MARSEILLE (France)

ԻԶ ՏԱՐԻ
ԹԻՒ 16
1911 ՅՈՒՆՎԱՐ 25 Դշ.
(Հ. Տ. Յունվար 12)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ
Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Ծանուցումներ կ'ընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակէտը 1 սանթիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանթիմ։
Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction : Place Alexandre-Labadie, 17.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. Միութիւն. — Իզմիրլեան կաթողիկոսի մահին շուրջ. — Հարուած մը Պատրիարքարանի առանձնաշնորհմանց. — Ատանայի որբերուն համար 10.000 ոսկի. — Հայեր ի Թիւրքիա. — Հայեր ի Ռուսիա. — Հայերուս ճակատագիրը. — Թիւրքիանէն լուրեր. — Թիւրք կարաւանի մը պատահած փորձանքը. — Իտալեւթիւրք նոր միջադէպ մը. — Կրետէ. Պարսկաստան. — Բոցտամի տեսակցութեան հետեւանքը. — Ծանուցումներ.

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

Ստացած ենք «Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութեան», որի կեդրոնատեղին է Գահիրէ (Եգիպտոս), 1909-1910 Դ. տարեշրջանի Տեղեկագիրը, թէ՛ հայերէն և թէ՛ ֆրանսերէն լեզուներով տպագրուած։

Միութիւնն իր Դ. տարեշրջանի սկիզբը հիմնական դրամագլուխ ունեցած է 1 միլիոն և 1518 եգիպտական ղրուշ* ու 78 հարիւրորդ, թէ՛ արժէթուղթերով և թէ՛ հնչուն դրամով, Գրէտի Լիոնէ դրամատան մէջ պահեստի դրուած։

Անցած տարեշրջանին (1909 մայիս 1էն 1910 ապրիլ 30) հասոյթ ունեցեր է տոկոսներէ և անդամավճարներէ 166,921 եգ. ղրշ. և 12 հրդ. որի վրայ աւելնալով նախորդ տարեշրջանէն մնացած 77,927 ղրշ. և 72 հրդ.ը, գումարն եղեր է 244,848 եգ. ղրշ. և 84 հրդ.։ Այդ գումարէն 33,905 ղրշ. և 50 հրդ.ը գնացեր է ընդհանուր ծախքերին (պաշտօնեաների վարձ, թղթակցութիւն, տետրակների տպագրութիւն, գրի թուղթ և այլ մանր ծախքեր). իսկ 155,603 ղրշ. և 55 հրդ.ը նպաստ ղրկուեր է զանազան տեղեր։

Ղրկուած նպաստները մեծ մասամբ Կիլիկիոյ և Փոքր-Հայքի ու մասամբ ալ Մեծ-Հայքի աղէտեալներին և մի քանի դպրոցների յատկացուած են։

Ամէն Հայ կուրախանայ անշուշտ թէ կայ Հայերէ կազմուած ընկերութիւն մը որ կրնայ փոքրիշատէ օգնութիւններ հասցունել իր աղէտեալ ազգակիցներին։ Այդ ուրախութիւն իր ուշադրութիւնը դարձունելով Հ. Բ. Ը. Միութեան վրայ, անոր յառաջդիմութեան, աւելի կանոնաւորութեան և աւելի արդիւնաւորութեան կը ցանկայ բնականապէս ամէն Հայ։ Այդ ցանկութիւնը պատճառ կը դառնայ որ ուրախութեան հետ մէկտեղ դիտողութիւններ ալ յայտնուին ընկերութեան գործունէութիւնը աւելի կանոնաւոր, աւելի արդիւնաւոր և աւելի գրաւիչ դարձունելու համար։ Հանրային գործերի վրայ քննադատութիւնները, երբ կանոնաւորութեան գծէն դուրս չելնեն, հանրային գործերի յառաջդիմութեան անիւները կը դառնան։ Եթէ «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւն»ը Եգիպտոսի «Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութեան» չափ դրամ չունենալով մէկտեղ և նոյն իսկ ռուս կառավարութեան կողմէն մինչև մի որոշ աստիճան սեղմուած շրջանակի մը մէջ ապրելով, աւելի անուն ու գործունէութիւն ունեցած է, աւելի աշխոյժ ու ոգևորութեան եռանդ կը տիրէ իր մէջ, պատճառն այս է որ «Կովկասի Հայոց Բարեգործական»ը ոչ միայն գովաբանութեան այլ և քննադատութեան ենթարկուած է տեղական հայ մամուլին մէջ և իր կանոնագրով հայ ժողովրդին առջև աւելի բաց ու մատչելի դիրք մ'ունի։

Ուստի մենք ալ այդ նկատումներով, Հ. Բ. Ը. Միութեան Տեղեկագիրը կարդալէ յետոյ, մեր զգացած ուրախութեան հետ մէկտեղ մէկ քանի դիտողութիւններ ալ յայտնել հարկ կը համարինք։

(Շարունակելի)

Մ. Փ.

ԻԶՄԻՐԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԻՆ ՇՈՒՐՋ

Հանգուցեալ Մատթէոս Բ. կաթողիկոսը թաղած են Գէորգ Դ կաթողիկոսի շիրմին քով գերեզման մը փորելով։

— Կաթողիկոսի թաղման օրը, դեկտ. 19/1 յունվարի կիրակի օր, Թիֆլիսի վանքի Մայր եկեղեցիին մէջ հոգեհանգստի պաշտօն կատարուած է շատ շքեղ կերպով։ Ներկայ գտնուած են փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկով իր կոմսուհիի հետ մէկտեղ, փոխարքայութեան և նահանգապետութեան բարձր պաշտօնատարները, օրթոտոքս, կաթոլիկ, բողոքական, նեստորական, մահմէտական և հրէական դաւանութիւնների գլխաւոր ներկայացուցիչները և այլն և այլն։ Պատարագիչ Տ. Եփրեմ Եպ. Սուքիասեան հոգեհանգստի արարողութենէն առաջ կարճ դամբանական մը խօսեցաւ, որմէ յետոյ Տիար Ալեքսանդր Քալանթար (Մշակի խմբագիր) և սիւննի մահմէտականների մուֆթին մէկ մէկ ճառ խօսեցան եկեղեցին մէջ։ Հիւրերի ընդունելութեան և եկեղեցիին ներսն ու դուրսը խռնուած ժողովրդին մէջ կարգը պահպանելու համար առաջ Նորդարարանի կողմէն յատկապէս կարգադիր մասնաժողով մը ընտրուած էր որ շատ կանոնաւոր կերպով վարեց գործը, հարկ չթողլով բնաւ եկեղեցիի բակին մէջ ոստիկանների ներկայութեան և միջամտութեան։

ՀԱՐՈՒԱԾ ՄԸ
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՄԱՆՑ

Կարինի կուսակալութեան կողմէն տեղին առաջնորդարանը ղրկուած զեկոյցի մը մէջ տեղեկութիւն կը տրուի թէ ասկէ ետք կառավարական հսկողութեան և վաւերացման պիտի ենթարկուի քրիստոնեայ հասարակութեանց եկեղեցական կալուածներու մատակարարութիւնը, ինչպէս կ'ըլլայ իսլամական վագըֆներու համար և թէ «Մէճլիսի իտարէ»ներու մէջ ոչ-իսլամ կրօնական պաշտօնեաները առանձնաշնորհեալ դիրք պիտի չունենան, այլ քուէարկութեամբ առաւելագոյն քուէ ստացողները միայն պիտի նկատուին իբր «Մէճլիսի իտարէ»ի անդամ։

Կարինի առաջնորդ Սմբատ եպիսկոպոս այս պարագան տեղեկագրելով Պատրիարքարանի կը հարցնէ թէ նահանգային օրէնքը Պատգամաւորական ժողովին կողմէ չվաւերացուած, ինչպէս կարելի է այդ տեսակ զեկոյց մը ընել առաջնորդարաններուն։ Ասկէ զատ այդ զեկոյցը ուղղակի հարուած մըն է ազգային առանձնաշնորհմանց դէմ, նկատելով որ Պատրիարքարաններու կամ առաջնորդարաններու մօտ գտնուող ֆէրմաններուն համաձայն արգիլուած է ազգային ներքին խնդիրներու մէջ ամէն կարգի օտար միջամտութիւն։

(Ազատամարտ)

ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
10.000 ՈՍԿԻ

Կիրակի օր (դեկտեմբեր 26/8 յունվար) Օսմ. Երեսփոխանական Ժողովի պիւտճէի յանձնաժողովը Ատանայի որբերուն համար կառավարութեան կողմէ Ազգ. Պատրիարքարանին վճարուելիք 10.000 ոսկիի խնդիրը զբաղեցաւ։

Մեծամասնութիւնը անցեալ տարի այս 10.000 ոսկին մերժած էր. այս անգամ ալ այդ մեծամասնութիւնը մերժման կողմը գտնուեցաւ, բայց շնորհիւ Պ. Գր. Զոհրապի ջանքերուն — որ յատկապէս կիրակի օրը այս նիստին ներկայ գտնուելու փութացած էր —, պիւտճէի յանձնաժողովը իր կարծիքը փոխեց ու այդ գումարին վճարումը ընդունուեցաւ։ Յանձնաժողովը այս առթիւ փափաք յայտնեց որ այդ գումարներուն իրենց նպատակին յատկացուելուն մասին տեղեկութիւններ տրուին իրենց։

Յայտնի է արդէն որ Ատանայի որբերը խնամելու համար ուղղակի Ազգ. Պատրիարքարանի տրամադրութեան տակ կարևոր գումար մը դնելու գաղափարը Պ. Զոհրապ յղացած և կարգ մը ուրիշ խնդիրներու հետ միասին կառավարութեան ընդունել տուած էր։ Որչափ որ կը յիշենք, որոշուած գումարը 23.000 ոսկի էր, որուն պիւտճէի յանձնաժողովը անցեալ տարի միայն 10.000 ոսկին ընդունելով, մնացածը մերժած էր. այս տարի հայ երեսփոխանը 10.000 ոսկի ևս ընդունել տալու յաջողեցաւ։

---

* Եգիպտական 100 ղրուշը կարժէ 26 ֆրանք = 20 շիլին և 6 բէնի = 5 տոլար։ 1 օսմանեան ոսկին կարժէ 87 ղրշ. եգիպտական և 75 հարիւրորդ։

Դուրեան պատրիարքի կողմէն շնորհակալութիւն գիր մը ղրկուեր է Պ. Գր. Զոհրապին։

(Ազատամարտ)

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Նախկին պատրիարք Օրմանեանի վրայ եղած ամբաստանութիւնները քննելու պաշտօնով Ազգային ժողովէն ընտրուած Յանձնաժողովը իր տպագրուած Տեղեկագիր բաժնեց երեսփոխաններին դեկտ. 30ին երբ ժողովը գումարուած էր Ամենայն Հայոց կաթողիկոսի մահագոյժը պաշտօնապէս լսելու և յոտնկայս իր յարգանք ու խորին ցաւակցութիւն յայտնելու համար։ Արդէն ժողովը չէր կրնար նոյն օր ուրիշ գործով զբաղիլ։ Օրմանեանի խնդիրը կը մնայ տակաւին Ազգ. ժողովի օրակարգին մէջ և դեռ յայտնի չէ թէ՞ երբ կարգը անոր կուգայ։ Քննիչ Յանձնաժողովի Տեղեկագիրը կը թեթեւցունէ Օրմանեանի վրայ եղած ամբաստանութիւնները։

— Թիւրքիաի զանազան քաղաքներին մէջ կը շարունակեն հանգանակութիւններ ընել ի նպաստ ռուսահայ բանտարկեալներին։ Այսպէս Տիգրանակերտի մէջ 60 օսմ. հաւաքելով ղրկեր են Կ. պոլիս ատոր համար յատկապէս կազմուած մարմնին։

— Լուր առնուած լինելով թէ Մուշի զօրանոցին մէջ հակառողջական վիճակ մը տիրելուն պատճառով հիւանդութիւններու ենթակայ են զօրքերը որոնց մէջ շատ մը հայեր ալ կը գտնուին, Օսմանեան խորհրդարանի Դաշնակցական պատգամաւորները դիմում ըրին պատերազմական նախարարին որ խոստացաւ հեռագրով փութացունել անոնց վիճակի բարեփոխման համար հարկ եղած հրամանները։

— Տխրութեամբ կը կարդանք «Ազատամարտ»ի մէջ թէ Տիգրանակերտի մէջ խմորատիպ հրատարակուող «Տիգրիս» շաբաթաթերթի խմբագիր Տիար Վահան Կարապետեան որ իբրև զօրք տարուած էր Մուշ, այնտեղ տիրող հիւանդութեան զոհ լինելով մեռեր է։

— Մուշի տեղական իշխանութիւններն արգելքներ կուզեն հանել Տ. Սիմէոն Զաւարեանի Տարօնի ազգային վարժարաններու ընդհանուր տեսչութեան պաշտօնին և բժիշկ Զաւարեանի Մուշի մէջ հաստատած Միջազգային Հիւանդանոցին դէմ, առարկելով թէ օտարահպատակներ են ատոնք։ Մուշի առաջնորդ Գեր. Խարախանեան Եպ. հեռագրած էր եղելութիւնը Կ. պոլիս պատրիարքարանին։ Նոյնը հեռագրուած էր նաև «Ազատամարտ»ին։ Օսմանեան խորհրդարանի դաշնակցական հայ պատգամաւորներն այս խնդրի համար դիմում ըրին ներքին գործերի նախարար Թալէաթ պէյին։

— Քղիի առաջնորդ Պսակ վարդապետ խնդրեր է պատրիարքարանէն շուտով 100 ոսկի ղրկել, Ալթուն Հիւսէյին գիւղի հողային խնդիրը կարգադրելու համար։

— Թալասի (Կեսարիա) Վարդ-Պատրիկեան վարժարանի ուսուցիչը Տ. Քէրթմէնեան ամէն կիրակի իրիկուններ կատեխոսէ եկեղեցիին մէջ։ Ժողովուրդը որ կը սիրէ լսել հանրօգուտ դասախօսութիւններ, իր ներկայութեամբ կը քաջալերէ ուսուցիչին։

— Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ արքեպ. Յակոբեան հեռագրով մը իմացուցեր է Երուսաղէմի պատրիարքութեան Կ. Պոլսի փոխանորդին թէ հրաժարած է իր պաշտօնէն որովհետև կառավարութեան իր ըրած դիմումներ ապարդիւն կը մնան։

— Ազգային ժողովի այն անդամներ որոնք կը յամառին սահմանադրական օրէնքներին հակառակ կերպով շարունակել իրենց երեսփոխանական պաշտօնավարութիւն, նիստ մը ունեցած են դեկտ. 31/13 յունվարի ուրբաթ օր Ղալաթիաի խորհրդարանին մէջ,

Այդ օր 71 երեսփոխանի ներկայութիւնն ունենալու համար ամէն ջանք ըրեր են, երկար ժամանակէ ի վեր առանց պատճառ իմացունելու ժողովին չեկող և հետևապէս կանոնագրին համեմատ երեսփոխանութենէ դադրած համարուողներին ետևէն մարդ ղրկեր և թախանձելով ժողովի բերեր են այս անգամ, բայց դարձեալ չեն յաջողեր 71 թիւն ունենալու, թէև այդ յաջողութիւնն ալ չէր կրնար օրինական դարձունել Ազգային ժողովի ներկայ կազմին շարունակութիւնը։ Այսուամենայնիւ, ատեանը կը բացուի և կը կարդացուի Ազատական երեսփոխաններէն Պատրիարքին ղրկուած գրութիւնը որով կը բողոքէին Ազգային ժողովի արդի ապօրինաւոր վիճակին դէմ և կը յայտարարէին թէ մինչև որ ժողովն իր օրինաւոր կազմը չստանայ, չեն կրնար մասնակցիլ իրենք։ Պատրիարքը Մայր-Դիւանին ղրկած էր այդ գրութիւնը։ Ներկայ պահպանողական երեսփոխաններն, որոնք, ինչպէս կերևի, որոշած են օրէնքի և իրաւունքի ամէն ձայն խեղդել իրենց մենծ աղայական ինատը առաջ քշելու համար, նշանակութիւն չեն տուեր այդ գրութեան և ստորագրողները իբր երկրորդ անգամ բացակայողներ նկատել ուզեր են։ (կանոնագիրը հրաժարած կը համարի անոնք որ 3 անգամ չեն երթար ժողովին առանց բանաւոր պատճառի, թէև այս նստին ներկայ գտնուող և Ազատական երեսփոխաններն իբրև երկրորդ անգամ բացակայողներ նկարել ուզողներին մէջ կան այնպիսիներ որոնք գուցէ տասը նստէ բացակայ եղած էին իրենք և այդ օր միայն գնացած։)

Այնուհետև կը կարդացուի Դուրեան պատրիարքի ղրկած մէկ նոր գրութիւնը որի վրայ բաւական երկար խօսակցելէ յետոյ չեն կրնար եզրակացութեան մը յանգիլ և շարունակութիւնը կը թողուն յաջորդ նստին որ պիտի գումարուի 14/27 յնվր.ի ուրբաթ օրը։

Ահաւասիկ Դուրեան պատրիարքի ղրկած այդ նոր գրութիւնն ալ՝ որ մեր ազգային ժամանակակից պատմութեան վերաբերեալ կարևոր տօգիւման մը լինելուն համար կարձանագրենք Արմէնիայի մէջ, մեր անկողմնակալ և անաչառ ընթերցողներին մասնաւոր ուշադրութեան և դատողութեան ներկայացունելով և իրենց թողլով որակել մի քանի մեծ աղաներին վարմունքը որոնք իրենց հակառակաւորութեան ոգին այնչափ առաջ կը տանին որ իրենց կրքին կուզեն զոհել Պատրիարքն ալ, Սահմանադրութիւնն ալ, իրենց պէս չըմտածող և իրենց հետևիլ չուզող ազատական Հայերն ալ և այսպէս Ազգը անիշխանութեան մատնելով՝ Բ. Դրան միջամտութիւնը հրաւիրել մեր ներքին գործերին....

«Պատիւ ունեցայ ընդունելու Մայր Դիւանիդ դեկտ. 29 պաշտօնագիրը որով կը հաղորդուէր ինձ թէ Պատկ. Ընդհ. ժողովդ իր դեկտ. 24ի նիստը գումարելով 53 երեսփոխաններու ներկայութեամբ ու միաձայնութեամբ քուէարկած է հետևեալ բանաձևը. «Ժողովս նկատելով որ Ամեն. Դուրեան Սրբազան օրինական իրաւասութիւն չունի Ազգ. ժողովին որոշումները քննադատելու և նկատելով որ օրէնքը մեկնաբանելու խնդիր մը գոյութիւն չունի, յետ վիճաբանութեան անհետևանք կը թողու Ն. Սրբազնութեան պատասխանագիրը և կը յանձնարարէ Մայր Դիւանին հրաւիրել Դուրեան Սրբազանը նոյ. 26ի նիստին որոշումները գործադրելու»։

«... Կը ցաւիմ որ Պատկառելի Ժողովդ չունենալով հանդերձ «Մեծագոյն մասի ներկայութիւն», որով միայն կարելի էր վճռական վախճանի մը գալ, ուզեր է պնդել իր նախորդ որոշման վրայ, իր բանաձևին կցելով այս անգամ նոր յայտարարութիւններ ալ, որոնք չեմ կարծեր որ օրինական արժէք մը կարենան ունենալ։

«Վերջին անգամ մըն ալ համարձակութիւն թող տրուի ինձ, Տեարք երեսփոխանք, մտադիր ըլլալու զձեզ թէ Ազգ. Ժողովի մը առանց մեծամասնութեան տուած մէկ որոշումին հանդէպ Պատրիարքին բանելիք դիրքի մասին պատշաճ չէ լրջմտութեամբ չվերաբերուիլ, օրինական դիտողութիւն մը իսկ ընելու իրաւասութենէն զրկելով գործադիր իշխանութեան պետը։ Ի հարկէ չեմ հասկնար վերջերս յուզուած վէթօի օտար ու անյարմար պահանջումը որ մեր Սահմանադրութեան մէջ տեղ չունի բնաւ, բայց ըստ որում Պատրիարքն է որ կը պահանջուի հանդիսաւոր ուխտ «Ճշմարտապէս հսկելու ազգային սահմանադրութեան անթերի գործադրութեանը» (Սահմ. յօդ. 4 համեմատ. յօդ. 8ին) և պատրիարքն է որ իր բացակայութեան ատեն ազգային (իմա վարչական) ժողովներուն մէջ տրուած որոշումներուն մասին իրաւունք ունի իր դիտողութիւնները յայտնելով խնդիրը կրկին քննութեան յանձնելու, և այդ վերաքննութենէն ետքը, եթէ դարձեալ Սահմանադրութեան անհամաձայն գտնէ տրուած որոշումը՝ զայն չգործադրելու (Սահմ. յօդ. 9), հարկ է ընդունիլ որ կրաւորական գործողութիւն մը չէ անոր պաշտօնը, այլ վերին հսկողութիւն մը օրէնքին ուժովը։

«Իրաւ է թէ ասով Պատրիարքի մը իրաւունք տրուած չըլլար Ազգային Ժողովի օրինական մեծամասնութեան որոշումներուն դէմ դառնալու, որոնց՝ ընդհակառակն պարտաւոր է հպատակիլ, սակայն չեշտուած են ստիպողական պարագաներ յորս Պատրիարքի կողմէ գործադրութեան անտեղութիւն մը մատնանշուած ատեն Ընդհ. Ժողովը յանձն կ'առնու փոխել իր որոշումը, ըլլայ երեք ամիս ետքը, ինչպէս կը տրամադրէ Ներքին կանոնագիրը (յօդ. 75), ըլլա՛յ աւելի կարճ ժամանակամիջոցով, ինչպէս կը կարդանք 1889ին կազմուած խորհրդարանական յանձնաժողովի ծրագրին մէջ — որ բարեփոխումն է Ռուսինեանի կանոնագրութեան — «Ժողովն իր որոշումէն չի կրնար դառնալ կամ զայն փոփոխել՝ եթէ ոչ այս ստիպողաբար և պատճառաբանեալ առաջարկ չըլլայ իրեն՝ Պատրիարքի կողմէն կամ գէթ տասն երեսփոխանաց ստորագրութեամբ, յորում պարագայի խնդիրը կրկին կ'ընդունուի ի վիճաբանութիւն, խնդրոց կարգի կամ օրակարգի մէջ զետեղուելով ըստ որոշման ժողովոյ (Յօդ. 44).»

«Կանխելով յայտնել թէ ժամանակին անկարգութեանց հետևանքով Ընդհ. Ժողովէն անցած կամ վաւերացուած չէ ծրագրին այս տրամադրութիւնը, որ հինէն կուգայ, պէտք կը զգանք սակայն հարցնելու թէ անով հաւաստիք մը չը՞նծայուիր արդեօք սովորութեան կամ փորձառութեան վրայ հիմնուած որոշ թելադրութեան մը. — Մե՞նք չէ որ պիտի տարակուսինք։

«Արդ, թէ «օրինաւոր» որոշման մը հանդէպ իսկ Պատրիարքին տրուեր է այս իրաւասութիւնը, Տեարք Երեսփոխանք, ինչո՞ւ ուրեմն կը զլացուի Պատրիարքին ոչ օրինաւոր որոշում մը փոխել տալու համար օրինական դիտողութիւն մը ընելու իրաւունքը, և յետոյ, որո՞վ իշխանութեամբ «օրինական մեծամասնութիւն չունեցող» ժողով մը «անհետևանք կը թողու» Պատրիարքին պատասխանագիրը։

«Բայց ի՞նչ հարկ այս ամենով զբաղեցնելու պատկառելի Ժողովդ, քանի որ ինչպէս դիւրին է տեսնել ներկայ բանաձեւէն, մէջտեղը Պատրիարք մը չկայ որուն հետ գործ ունենայ ինքը, այլ «Դուրեան Սրբազան» մը կամ թերեւս «Նախկին Պատրիարք» մը, ինչպէս յայտարարուած էր յատենի Ժողովին։

«Ես շատ տրամաբանական կը գտնեմ Պատկ. Ժողովին այն վերաբերմունքը, որ բացատրութեան կարօտ ալ չէ. միայն թէ չեմ կրնար հաւատալ յանուն Սահմանադրութեան՝ արդարացում մը իր այն որոշումներուն, որոնց շնորհիւ ազգային իշխանութեան ներկայացուցիչները՝ Պատրիարք և վարչութիւն՝ համանգամայն բարձուեցան մէջտեղէն և Պատկ. Ժողովը չուզեց ընտրել նոր վարչութիւն մը, ու հիմա՝ կը կարծէ իր պարտքը կատարած ըլլալ, կրկին յանձնարարելով ինձ ձեռք բերել այդ վարչութեան պետական վաւերացումը։

«Այժմ ես իբրև Նախկին Պատրիարք կամ Դուրեան Սրբազան, ինչպէս որ կ'ուզէք, Տեարք երեսփոխանք, կուգամ յայտարարել թէ Հոկտեմբեր 22էն ի վեր՝ ուր իմ հրաժարականս տուի Պատկ. Ժողովին, պատրաստ ունենալով իմ մօտ Բ. Դրան մատուցանելիք հրաժարագիրս՝ թէպէտ և կը խորհէի Ընդհ. Ժողովին Նոյմ. 26ի նիստէն անմիջապէս վերջ յղել զայն ուր որ անկ է, բայց խոհեմութիւն համարելով գործադիր իշխանութեան դէմ առժամանակեայ գոյութիւնն ալ չվտանգել ինձմով՝ սա ողորմելի ճգնաժամին մէջ, նախ բերանացի դիտողութիւններս հաղորդեցի Մայր Դիւանին (որուն Բ. ատենապետ էֆէնտին զո՛ւր կը ջանայ արդարանալ) և յետոյ գրաւոր յայտնեցի զանոնք։

Բայց որովհետև, «անհետեւանք» թողուեցաւ և կը թողուի այս ամէնը, ուրիշ բան չի մնար ինձ բայց թէ ընդհուպ Բարձր. Դուռ մատուցանել հրաժարագիրս, անիշխանութեան պատասխանատուութիւնը՝ իրենց իսկ հաճութեամբը՝ թողլով անո՛նց, որոնք Նոյ. 26ի նիստին մէջ ու անկէ վերջ ալ Ազատական կուսակցութեան կողմէ երեսփոխանութեան մէկ հինգերորդի փոփոխման օրինաւոր առաջարկն ալ անհետեւանք թողուցին։

«Չուզելով երկարել այլ ևս, չեմ դադրիր մաղթելէ վշտակիր ոգւով որ Տէրն իմաստութիւն և ճշմարիտ եղբայրասիրութիւն շնորհէ ամէնուս և հնարաւորութիւն մը՝ համերաշխ գործունէութեան շուրջ հաւաքելու Ազգին բոլոր զաւակները։»

Աղօթարար՝
ԵՂԻՇԷ ԱՐՔ. ԴՈՒՐԵԱՆ

ՀԱՅԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Ասկէ առաջ հրատարակած էինք թէ ռուս կառավարութիւնը օտար դաւանութիւնների վարչական բաժնի տեսուչ Բէդրովը Կովկաս ղրկած է, տեղին վրայ ուսումնասիրելու համար օտարադաւան եկեղեցիների դրութիւնները։ Ահաւասիկ Ներքին գործերի Նախարար և Նախարարապետ Ստօլիփինէն այս նկատմամբ հանգուցեալ կաթողիկոսին ղրկուած գրութեան թարգմանութիւնը. Վեհ. Իզմիրեան այս գրութեան համեմատ հրահանգ ղրկած էր առաջնորդներին որ Բէդրովի պաշտօնին գործադրութեան համար իրենց կողմէ հարկ եղած դիւրութիւնները տան։

«Նորին Սրբութիւն Էջմիածնի Պատրիարք Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթէոսին։

Ներքին գործերի Մինիստր
№ 10624
19 Նոյ. 1910 թ.
Պետերբուրգ

Ձերդ Սրբութիւն !

Ռուսական պետութեան հայ-լուսաւորչական եկեղեցու վիճակի հետ մօտիկից ծանօթանալու համար ես համապատասխան գտայ՝ ուղարկել հայ լուսաւորչականութիւնը դաւանող վայրերը իմ առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ գաղտնի խորհրդական Պետրովին։

Իմ պարտքը համարելով տեղեկացնել այդ մասին Ձերդ Սրբութեանը, պատիւ ունիմ խնդրել Ձեզ, չզլանալ կարգադրելու հայ-լուսաւորչական հոգևոր վարչութեան՝ ամեն կերպ աջակցել յիշեալ պաշտօնեային, Ձեր ենթակայ հաստատութիւնների և անձերի կողմից նրա վրայ դրուած յանձնարարութեան աջող կատարման համար։

Ընդունեցէք, Ձերդ Սրբութիւն, իմ յարգանքի և կատարեալ անձնուիրութեան հաւատչեան։

Ս. ՍՏՕԼԻՊԻՆ»

— Կովկասէն ալ դէպի Ամերիկա հայերի գաղթը սկսած է տարածուիլ։ Օտէսաէն դեկտ. 10/23ին գրած են Թիֆլիզի «Հորիզոն»ին հետեւեալը.

«Անցեալ օրը այստեղի գլխաւոր փողոցում յանկարծ յայտնուեցին մի խումբ մարդիկ։ Նրանք նաւով եկել էին ըստ երեւոյթին և նաւահանգըստից գնում էին երկաթուղու կայարանը՝ իրենց ճանապարհը շարունակելու։ Մօտ քսան հոգի էին, արևակէզ, տարօրինակ հագուստներով, ճամբորդական աղքատիկ պարկերը ուսերին, և գրաւում էին ամենքի ուշադրութիւնը։

Մօտենալով նրանց՝ իմացանք որ բոլորն էլ հայեր են, Ալէքսանդրապօլի գաւառից և գաղթում են Ամերիկա։

— Բայց ի՞նչ կայ այնտեղ, և ինչո՞ւ համար էք գնում։

— Գնում ենք աշխատելու։ Մարդ ունենք այնտեղ, որ գրում է՝ թէ գործ շատ կայ, — եղաւ նրանցից մէկի պատասխանը։

Գաղթ դէպի Ամերի՛կա, այն էլ Ալէքսանտրապօ՞լի գաւառից։ Մի՞թէ արգաւանդ Շիրակն էլ չի կարող պահել հային իր գրկում և մնացնել նրա մէջ այդ անհանգիստ, փախստական ոգին։ Եւ ո՞վ է այդ մարդը, որ ոսկու այդ դէզերն է խոստանում նըրանց հեռաւոր երկրում։»

— «Դաշնակցութեան» գործով ամբաստանուած Մէհրաբեան ամուսինները, Ջանազան և Արշակ (գրական անունով՝ Սրինգ), բանտէն արձակուեր են դեկտ. 16/29ին. տիկինը Թիֆլիսի բանտն էր, այրն ալ Նովոչերկասքի։

— Նովոչերքասքէն կը հաղորդեն թէ բանտարկուածների նախաքննութիւնն աւարտեր է դեկտ. 20/2 յունվարին։ Բանտարկուածների յայտարարութիւնները պիտի ներկայացուին դեկտ. 27էն 30 (յունվար 9էն 12)։

— «Կովկասի Հայոց Ուսուցչական Միութեան» կեդրոնական վարչութիւնը դիմումներ է ըրեր հայ բըժիշկներին և դեղագործներին որ Միութեան անդամներին համար որոշուած չափով զեղչեր ընեն իրենց այցագնի և դեղագիններին վրայ։ Այդ դիմումներ հաճութեամբ ընդունուեր են շատերէն։

— Բ. Պետական Դումայի հայ անդամ Տ. Ստեփան Տէր-Աւետիքեանց որ Բանանց գիւղը կը գտնուի այժմ, ոստիկանութենէն կոչնագիր մը ստացեր է Թիֆլիզի դատաստանական քննիչին ներկայանալու համար դեկտ. 27ին (յունվար 9)։ Տիար Տէր-Աւետիքեանց ամբաստանուած է թէ «Դաշնակցութեան» կը պատկանի և իր գործը պիտի քննուի Նովչերքասքի մէջ նոյն ամբաստանութեամբ բանտարկուածներին հետ։ Նա այժմ ինք ազատ թողուած է, 5000. րբլ. գրաւական տալով։

ՀԱՅԵՐՈՒՍ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

(Իրական դէպք)

Անցեալները Ռէբիւպլիք փողոցի պանդոկներէն միոյն մէջ աշխատելէ կը վերադառնայի։

Կէսօր էր։

Տուն գալու համար ընտրեցի ամենակարճ ճամբան որով միևնոյն ատեն առիթը պիտի ունենայի քանի մը հայ դէմքեր տեսնալու։

Սիրտը տարօրինակ փափաքներ ունի. երբեմն կը հրճուի ան ամենապզտիկ ուրախառիթ պատահարի մը հանդէպ և կը տխրի ամենաչնչին պատճառով մը։

Այդ օրը Նոր Տարին չորրորդ օրն էր որ կը պարգևէր աշխարհի։

Հազիւ հինգ վեց տարեկան տղայ մը կզբօսնուր պզտիկ փայտէ հրացանի մը հետ, խանութի մը առջև Grand'Rueի մէկ անկիւնը, հոն ուր rue Belsunceը կըսկսի։

Կիսամաշ շալվար մը, աղտոտ ու անգոյն ֆէս մը գլուխը, կարկտած ու պատռտած վերարկու մը կռնակը ու բզկտած գօտի մը մէջքին՝ անձ մը փողոցին մէջ աննպատակ ու մեռած քայլով մը կը յառաջանար, ճիշտ միևնոյն պահուն որ այդ փոքրիկը իր փայտէ հրացանը լարած թիրախ մը կը փնտռէր. Ծնողքը տղուն քովն ի վեր կը հրճուէր մանկիկին ուրախութիւնը տեսնալով ու անոր հե՛տ կը զուարճանար մանկական անկեղծութեամբ մը։

Տղան շփացած իրեն շռայլուած այս գորովէն, կը հարցնէր թէ որո՞ւ ուղղէ հարուածը։

— Հայո՛ւն, հայո՛ւն, պատասխանեց հայրը իր չափահաս լեցուն ձայնովը և մատովը եկուորը ցցունելով, որը ամօթէն քովընտի փողոց մը մտնալ աճապարեց։

Անբարբառ վկան եղայ այս տեսարանին ու մտածեցի. «Աստուա՛ծ իմ, միշտ ա՞յս է հայուն ինկած բաժինը. միշտ զուլո՞ւմը, միշտ հարուա՞ծը, միշտ նախատինքն է հայուն ժառանգը»։

Յետոյ՝ երբ մտածումներուս մութ խորերուն մէջ յառաջացեր էի, բարկացայտ ճշմարտութիւն մը գոռաց ներսէս. «Հայուն այս անբաղդ ճակատագրին պատճառը ինքն է. և եթէ ուզէ, եթէ կամենայ, կրնայ փոխել զայն։ Մարդ իր ճակատագիրը ինք կը շինէ։»

Կարծեմ լաւ չէ այսպէս ստրուկ, խեղճ ճակատագիր մ'ունենալ. ուրեմն, հայե՛ր, կամենա՛նք և փոխենք մեր ստրուկ ճակատագիրը ու ապրինք մարդու պէս որ երբ քաղաքակիրթ աշխարհը մեզ տեսնայ, պատկառելով ըսէ. — Ահա մարդ մը, հայ մըն է ասիկա։

ՆՈՒՄԱ

ԹՈՒՐՔԻԱԷՆ ԼՈՒՐԵՐ

Ծովային Նախարարութիւնը Անգլիոյ նաւագործարաններին 10 հատ թնդանօթակիր մարտանաւեր ապսպրեց որոնց 8ը Պարսկային ծոցին և 2ը ալպանական ծովեզրներին պիտի յատկացուին։ Քիչ ատենէն Նաւազուրդի պիտի դրուի 30 փոքրիկ թնդանօթակիր նաւերի շինութիւնը որոնք Կարմիր ծովի եզրներին հսկելու պիտի յատկացուին։

— Օսմանեան յեղափոխութեան հերոսներէն դեր-հազարապետ Նիազի պէյ առողջական պատճառներով խնդրած էր հանգստի կոչուիլ։ Թէև հանգստի թոշակի օրէնքին պահանջած տարիքին մէջ չգտնուիր Նիազի պէյ, բայց պատերազմական Նախարարընկատի առնելով ազատութեան դատին համար անոր մատուցած բացառիկ ծառայութիւնները, բացառիկ կերպով որոշեր է ամսական 2.500 ղրուշի կենսաթոշակ յատկացունել անոր։ Իսկ Նախարարական խորհուրդը անբաւական համարելով այդ կենսաթոշակը Նիազի պէյի համար, 4.000 ղրուշի բարձրացուցեր է։

— Ալպանական վարժարանների մէջ ուսումը լատինական տառերով ընելու մասին մերժողական ֆեթվա (վճիռ) տըւեր է Շէյխիւլիսլամութիւնը, յայտարարելով թէ իսլամ կրօնքը բացարձակապէս կարգիլէ արաբականէն տարբեր տառերով գրել և ուսուցանել Ղուրանը։

— Վանի կուսակալ նշանակուած է Սիւրիաի նախորդ կուսակալ Իսմայիլ Ֆազըլ փաշա. Իսկ Վանի նախորդ կուսակալ Պէքիր Սամի պէյ որ արձակուրդով Կ. Պոլիս գնացած էր, Տրապիզոնի կուսակալ նշանակուեր է։

— Գահընկեց Սուլդան Համիտէն ստորագրուած 1/2 միլիոն ոսկիի չէք մը գանձելու համար օսմ. կառավարութեան կողմէն Պէրլին ղրկուած էր արտաքին գործերի Նախարարութեան իրաւագէտ խորհրդական Րէշիտ պէյ։ Այս օրեր Ապտիւլ Համիտէն ստորագրուած մէկ միլիոն ոսկիի չէք մ'ալ ղրկուեր է նոյնին, Պէրլինի պանքէն գանձուելու համար։

— Սալոնիկէն կիմացունեն թէ Ապտիւլ Համիտի ամենէն սիրական կինը մեռաւ շաքարախտէն։ Համիտ շատ սիրտը կոտրած վիճակի մը մէջ կը գտնուի։

— Կ. Պոլսի լրագիրները կիմացունեն թէ 60.000 րէտիֆ (պահեստի) զօրքեր զէնքի տակ պիտի կանչուին փետրվար ամսին մէջ, ռազմափորձեր ընելու համար։ Երբ ասոնք իրենց տուն վերադառնան, նորէն ուրիշ 60.000 րէտիֆներ ալ պիտի կանչուին։

— Կ. Պոլսէն եկած վերջին լուրերէն կերևի որ քօլէրան բոլորովին դադրած է այժմ այնտեղ։

— Եէմէնի ապստամբութիւնը սաստկացած լինելով, կառավարութիւնը որոչած է բազմաթիւ զօրք և թնդանօթներ ղրկել զսպելու համար ապստամբները: Զօրքերու ընդհանուր հրամանատարութիւնը պիտի յանձնուի Զէրէկս Նուտուֆ փաշային և կամ Գարա Սայիտ փաշային: Երեք վաշտ զօրք արդէն ճանբայ ելած են Կ. Պոլսէն յնվր. 21ին, Հօտէյտա երթալու համար:

— Կառավարութիւնն որոշեց վերաշինել Ալպանացիներու վերջին դէպքերուն ժամանակ քանդուած տուները:

— Կ. Պոլսէն կը հաղորդեն Բարիզի «Ժուռնալ»ին թէ Թիւրքիոյ պանքին տնօրէնը Լոնտոն գնաց, այդ պանքի հիմնադիր սըր Էռնէստ Գասէլի հետ խորհրդակցելու համար Օսմանեան պանքին հետ ձուլուելու խնդրին նկատմամբ: Այդ կերպով պիտի վերնայ Կ. Պոլսէն ֆրանսանգլիական ֆինանսական հակառակութիւնը որ այնչափ ցաւալի հետեւանքներ ունեցաւ:

— Թիւրքիան խնդրեց Գերմանիայէն որ նորէն 13 մարզիչ սպաներ ալ ղրկէ:

— Եէմէնի խռովութիւններուն նկատմամբ Ատէնէն (անգլիական Արաբիա) յնվր. 19ին հեռագրած են.

«Սէյիտ Եահեա իմամը պաշտօնապէս կը հրատարակէ Թիւրքիոյ դէմ. իր տեղակալները զինուած խումբերով կը ղրկէ ամէն կողմ և Եէմէնի լեռները: Հաղորդակցութիւններն ընդմիջուած են. Տեղական իշխանութիւնները Կ. Պոլիս հեռագրելով օգնութիւն խնդրած են: Կը կարծուի որ այդ շատ ժամ կը տարածուի Եէմէնի ամբողջ նահանգին մէջ:»

Նոյն տեղէն և նոյն թուականով ուրիշ հեռագիր մ'ալ կըսէ. «Իշխանութեան հետամուտ եղող Սէյիտ Իտրիս յարձակողական դիրք բռնած է Թիւրքերուն դէմ: Ասիրի նահանգին կառավարիչը և քաղաքապան բազմաթիւ զօրքեր պաշարուած մնացած են նահանգային մայրաքաղաքին մէջ դեկտեմբեր ամսէն սկզբէն ի վեր: Ասիր ղրկուած նոր կառավարիչ մը չը կրցաւ Հօտէյտայէն անդին անցնիլ: Զինուած արաբ խումբերը մեծ գործունէութիւն ցոյց կուտան ամէն կէտերու վրայ: Հեռագրական հաղորդակցութիւններն ընդմիջած են. պատերազմական նշանակելի գործողութիւններ մօտալուտ կերեւին:»

ԹԻՒՐՔ ԿԱՐԱՒԱՆԻ ՄԸ ՊԱՏԱՀԱԾ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԸ

Թունուզէն հեռագրած են յնվր. 19ին,

«Սալոնիկէն 45 Թիւրքերէ խումբ մը ճանբայ ելեր են Ափրիկեան Տրիպոլիս երթալու համար, բայց սխալմամբ ուրիշ շոգենաւ մը մտեր են որու հրամանատարն ու նաւաստիներն Անգլիացի լինելով և ճանբորդ Թիւրքերն ալ անգլիերէն խօսիլ չը գիտնալով, Մարոք հասնելէ առաջ չեն կրցեր հասկցունել իրենց սխալած լինելը և նաւապետը զիրենք տարեր հաներ է Մարոքի նաւահանգիստը Թանժէր: Երբ ցամաք ելեր են, կարաւանը որոշեր է քալելով երթալ Տրիպոլիս: Հազարումէկ արկածներու պատահելով, Մարոքի երկրէն և ֆրանսական գաղթավայր Ալժերիէն անցեր և հասեր են Թունուզի մօտ, ամենախեղճ վիճակի մը մէջ ինկած: Թունուզի կառավարութիւնը ղրկեց զիրենք Թիւրքիա:»

ԿՐԷՏԷ

Աթէնքէն կիմացուենք յնվր. 18ին թէ Գանիայի մօտ ցոյցեր եղեր են Կրէտացիներու կողմէն: Պաշտօնական տեղեկութիւններուն նայելով, 100էն 150ի չափ Կրէտացիներ, որոնցմէ 10ի չափ զինուած, երեսփոխան Իլիաքիի ճառախօսութենէն յետոյ մտեր են Գանիա և հիւպատոսներուն յանձներ են հանրագիր մը որով կը բողոքէին սուլդանի վեհապետական իրաւունքներուն նկատմամբ պաշտպան տէրութիւններու հանած ծանուցագրին դէմ: Րէվօլվէրի գնդակ մը սխալմամբ պատահեցաւ ուսանողի մը և սպաննեց: Ցուցարարները կարգապահութեամբ քաշուեցան գնացին իրենց տեղեր:

ԻՏԱԼԵՒԹԻՒՐՔ ՆՈՐ ՄԻՋԱԴԷՊ ՄԸ

Հռոմէն կը հաղորդեն հետեւեալը.

«Ափրիկեան Տրիպոլսի մէջ իտալեթիւրք նոր միջադէպ մը պատահած է: Անցած տարի օգոստոս ամսին մէջ Տրիպոլսի իտալական հիւպատոսը վալիէն պահանջած էր արտաքսել Գարլոս Կիւզման անուն Ճէկը որուն ինչ ազգի պատկանիլը շատ որոշ չէր և որ իտալացիներուն անուանարկող պարսաւագիր մը հրատարակած էր: Վալին չհամաձայնեցաւ և հիւպատոսը սպառնացաւ որ եթէ Կիւզման չհեռանայ Տրիպոլսէն, ինք պիտի ձըգէ երթայ: Միութեան և Յառաջդիմութեան տեղական գօմիդէն ի զուր միջամտեց հիւպատոսը հանգստացունելու համար: Վերջապէս Կիւզմանի արտաքսումը որոշուեցաւ և գործադրուեցաւ: Այժմ Կիւզման ուզած է Տրիպոլիս վերադառնալ և տեղական թիւրք իշխանութիւններն ալ թոյլատրեր են անոր ցամաք ելնելուն, չնայելով իտալական հիւպատոսի բողոքներուն:

Իտալական մամուլը ուժգին կը բողոքէ այժմ ատոր դէմ:»

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պետերբուրգէն կը հաղորդեն Լոնտոնի «Տէյլի Թէլէկրաֆ»ին թէ ռուս կառավարութիւնը մտադիր է Ղազվինէն յետ կանչել այնտեղ պահած 600ի չափ զօրքերը: Միայն թէ կը սպասէ որ իր խնդրած արտօնութիւնը տրուի առանց մաքսատուրքի Պարսկաստան մտցունելու համար օդօմօպիլներ որոնք ռուսերուն Պարսկաստանի մէջ շինած ճանապարհներուն վրայ հաղորդակցութիւնը պահպանելու պիտի գործածուին. Նաև կուզէ որ որոշուին Գարատաղի նահանգին մէջ ռուսպարսկական սահմանագլխին վրայ այն հողաբաժիններու սահմանները ուր գտնուող հանքերը շահագործելու արտօնութիւնը պիտի ունենայ Ռուսիա:

Պարսիկ նախարարութիւնն այժմ յօժար կերեւի գոհացում տալու Ռուսիոյ պահանջներուն: Դեռ խօսք չկայ ո՛չ Դավրէժէն և ո՛չ Արտապիլէն ռուս զօրքերը յետ կանչելու մասին:

— Պէրլինէն կիմացուենն թէ գերմանական գաղափարն արտասահմանի մէջ տարածող ընկերութիւնը ծանուցեր է որ Ռուսիա կամ Կովկաս հաստատուած շատ մը գերմանացի գաղթականներ մտադիր են Պարսկաստան երթալ:

ԲՈՑՏԱՄԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Բոցտամի մէջ Գերմանիայի Վիլհէլմ կայսրի և Ռուսիայի Նիքոլա ցարի տեսակցութեան հետեւանքն եղած է Պարսկաստանի մասին համաձայնութեան հետեւեալ ծանուցագիրը, որ Ռուսիայի արտաքին գործերու նախարարութեան կողմէն ղրկուած է Գերմանիային.

«Յօդուած առաջին. — Ռուսական կայսերական կառավարութիւնը կը յայտարարէ թէ Պաղտատի երկաթուղիի ծրագրի իրագործման չհակառակելու յօժարած է:

«Յօդ. 2. — Պաղտատի երկաթուղին Պարսկաստանի մէջ շինուելիք երկաթուղային գծին հետ միացնելու մասին գերմանական կառավարութեան յայտնած փափաքին համապատասխանելու համար ռուս կառավարութիւնը յանձն կառնէ, երբ պարսկական գիծը շինուի, անմիջապէս սկսիլ շինել նաև Թիւրքպարսկական սահմանագլխին վրայ այն գիծը որ Սատրճէն պիտի միացունէ Խանիքինի հետ: Երկու կառավարութիւններն ալ պիտի դիւրացունեն միջազգային առեւտուրը Խանիքինի գծին վրայ:

«Յօդ. 3. — Գերման կառավարութիւնը յանձն կառնէ երկաթուղային գիծեր չշինել ուրիշ շրջանակի մը մէջ, բաց ի Պաղտատի գծէն և Խանիքինի հիւսիսակողմի ռուսպարսկական սահմանագլխէն:

«Յօդ. 4. — Գերման կառավարութիւնը կարձանագրէ որ քաղաքական նպատակներ չունի Պարսկաստանի մէջ, այլ միայն առեւտրական նպատակներու պիտի հետամտէ հոն: Գերման կառավարութիւնը կը յայտարարէ որ բնաւ դիտաւորութիւն չունի Պարսկաստանի մէջ երկաթուղիի, նաւային և հեռագրական ճանապարհներու և կամ ցամաքային ոեւէ տեսակ զիջումի մենաշնորհ ստանալու իր սեփական օգտի համար և ոչ ալ աջակցելու որ իր հպատակներ կամ ուրիշ ազգերու հպատակներ այդպիսի մենաշնորհ մը ձեռք բերեն:»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԲԱԶՄԱՎԷՊ

Բացուած է ԲԱԶՄԱՎԷՊԻ բաժանորդագրութիւնը առաջիկայ 1911 տարւոյն համար: Բաժանորդ կարելի է գրուիլ ո՛ր ամսէն որ կուզուի: Բաժանորդագրութիւնը կանխիկ է: Բաժնեգինն է տարեկան Փր. 10, վեցամսեայ Փր. 5, եռամսեայ Փր. 2.50: Իւրաքանչիւր Թիւ կարժէ Փր. 1: Հասցէ՝

Rédaction de la revue «Bazmavep».
St· Lazare VENISE (Italie):

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՑԱՐԱՐ

Արմէնիայի Ա. տարեշրջանի թիւերն որոնք բոլորովին սպառած են, շատերու հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են այս Ցուցարարի մէջ որ ութածալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ: Գինն է 1 ֆր. 40 սանդիմ:

Տարածելու համար մէկ անգամէն 10 օրինակ գնողին կը ղրկենք 10 օրինակը, ապահովագրուած ծրարով, 10 ֆրանգի փոխարէն:

Դիմել Արմէնիայի խմբագրութեան

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

[illegible]

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ: Գին 1 ֆրանգ:

ԱՇԽԱՏԱՆՔ

լրագիր հասարակական, տնտեսական եւ քաղաքական

Տարեկան բաժնորդագինն է Թիւրքիա 15 ղրշ., Ամերիկա 1 ¼ տլր. և ուրիշ ամէն տեղեր 6 ֆր.: Հասցէն Rédaction du journal ACHKHADANK· à la librairie S· Tokadjian·
SMYRNE (Turquie)

ԺԳ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

(ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՅԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
1894

1 ֆրանգ և 40 սանթիմ:

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներուն 25 % զեղչ կը լինի:

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է:)

Եղիազար Մուրադեան. Քննական Պատմութիւն Արշակ Բ.ի և անոր Պապ որդւոյն: (Հայոց պատմութեան մէկ կարեւոր կէտին վրայ քննադատական տեսութիւն մ'է որի համար Մ. Աղաբէկեան գրած է թէ «Հեղինակին այդ ձեռնարկութիւնը պատիւ է բերում իրան և այն ազգին, որին պատկանում է պատմութիւնը»): 2 ֆր. 50

Բակուրան. Կիպրոս կղզի (Ա. Աշխարհագրական և պատմական տեսութիւն: Բ. Հայ գաղթականութիւն:) 1 ֆր. 25

Բանասէրի հրատարակած գիրքերը մեզ մօտ կը ծախուին Մարսէյլի մէջ միենոյն գիներով ինչ որ Բարիզի մէջ «Բանասէր»ի խմբագրատունը:

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Le Gérant : François CARRIERE
Marseille. — Imprimerie du Midi